

Տուբերկուլյոզը ծանր հիվանդություն է, որը փոխանցվում է օդակաթիլային ճանապարհով (հագալիս, փռչտալիս, խոսելիս): Տուբերկուլյոզը չբուժելու դեպքում, այն կարող է հանգեցնել մահվան:

Տուբերկուլյոզով կարող է հիվանդանալ ցանկացած մարդ՝ տղամարդ և կին, երիտասարդ և ծեր, աղքատ և հարուստ: Բայց գրեթե բոլոր դեպքերում այն կարելի է ամբողջությամբ բուժել:

ԿԱՐԵԼԻ Է.

Բուժվել կարելի է միայն բժշկի վերահսկողությամբ:

Եթե չբուժեք տուբերկուլյոզը, կարող եք վարակել ընտանիքի բոլոր անդամներին և ընկերներին:

Միգրանտները, որոնք գնում են ՌԴ՝ ապրելու և աշխատելու նպատակով, Միգրացիոն միասնական կենտրոնում փաստաթղթերի հանձնման ժամանակ անպայման անցնում են տուբերկուլյոզի հետազոտություն: Եթե անձի մոտ հայտնաբերվում է տուբերկուլյոզ, ապա նա չի կարող օրինական կերպով ապրել և աշխատել ՌԴ-ում: Նա պարտադիր պետք է բուժվի: Բժշկի վերահսկողությամբ բուժման կուրսի ավարտից հետո անձը կարող է կրկին ներկայացնել փաստաթղթեր Միգրացիոն կենտրոն և ստանալ աշխատանքի իրավունք:

Միգրանտը կարող է ստանալ վճարովի բուժում ՌԴ-ում կամ անվճար բուժում՝ իր երկրում:

ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ԱՒՏԱՆՇԱՆՆԵՐՆ ԵՆ.

- ջերմության բարձրացում,
- 3 շաբաթից ավել տևող հագ,
- վատ ախորժակ,
- քաշի կորուստ,
- թուլություն, հոգնածություն, սովորական աշխատանքից արագ հոգնածություն,
- գիշերային քրտնարտադրություն,
- ավշային հանգույցների լայնացում:

Եթե Դուք ունեք այս ախտանշանները, անպայման դիմեք բժշկի: Նա Ձեզ կնշանակի անհրաժեշտ անալիզներ և բուժման կուրս:

Բուժումը կարող է տևել կես տարուց մինչև երկու տարի՝ կախված հիվանդության ձևից:

Եթե անձը ժամանակին դիմի բժշկի, անցնի բուժման ամբողջական կուրս և հետևի բժշկի բոլոր ցուցումներին, ապա լիովին կբուժվի տուբերկուլյոզից:

Չի կարելի «բուժվել» ինքնուրույն կամ ծանոթների խորհուրդներով: Դա կարող է հանգեցնել հիվանդության անբուժելի ձևի:





**Դուք կարող եք ստանալ
անվճար խորհրդատվություն՝
զանգահարելով հետևյալ
հեռախոսահամարներին.**


+7 967 079-71-45

+7 915 452-83-92

+7 910 000-55-18


Քայլ դեպի առողջություն

Եթե ունեք բժշկական օգնության
ծառայության հետ կապված հարցեր
կամ խորհրդատվության կարիք,
կամ ցանկանում եք իմանալ, թե
ինչպե՞ս պաշտպանեք Ձեզ՝ կարող եք
զանգահարել հետևյալ:



ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՉՈՎ ՉՀԻՎԱՆԴԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՈՐ Է՝

- հաճախակի օդափոխել
բնակարանը կամ տունը, որտեղ
ապրում եք, կատարել խոնավ
մաքրումներ,
- լավ սնվել,
- հրաժարվել ծխելուց և ակոհոլից,
- եթե ունեք այլ հիվանդություններ,
ժամանակին բուժել դրանք



**ԻՆՉ Է
ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՉԸ:**